Գրիգոր Մարիկյան. Նկարչություն՝ հենված իմացության վրա



Ներկա օրերում, երբ արտաքուստ կարծես ամեն ինչ հեշտացել է, ստեղծագործելն ու արարելը սկսել են դասվել «մատչելի» զբաղմունքների շարքը: Շատերին թվում է, թե ամեն կլկլացնող՝ երգիչ է, տառաճանաչ մարդ՝ գրող, լուսանկարչական գործիք գործածող՝ լուսանկարիչ, իսկ յուրաքանչյուր գիծ քաշողը՝ նկարիչ: Իրականում, ստեղծագործելը դարեր շարունակ եղել և այսօր էլ տակավին մնում է ընտրյալների մենաշնորհը՝ հենված բնական օժտվածության և տարիների ընթացքում ձեռք բերված իմացության վրա: Նաև վերջինիս առկայությամբ է արվեստագետը տարբերվում արհեստավորից, իսկ սովորական բիծը վերածվում իմաստակիր գծի:

Այս խոհերին ակամա նպաստեց ծանոթությունս գեղանկարիչ, բեմանկարիչ և գրքերի հայտնի նկարազարդող Գրիգոր Մարիկյանի ստեղծագործության հետ: Իրոք, դժվար թե գտնվի մի ընթերցող, որն իր ձեռքն առած չլինի նրա նկարազարդած որևէ գիրք: Երբ մտնում ես Գրիգորի արվեստանոց, նախ տեսնում ես մի մեծ գրապահարան՝ լեցուն նրա ձևավորած գրքերով: Ապա մի անկյունում նկատում ես թատերական ներկայացումների համար արված նրա մանրակերտերը: Պատերից մեկին կախված են հաստոցային յուղաներկ աշխատանքները, իսկ մյուսին՝ նրա գրքային շապկանկարների շրջանակված տարբերակները՝ արված տուշով, ջրաներկով, գուաշով, տեմպերայով և այլն:

Գրիգոր Մարիկյանը ծնվել է հեռավոր Ալթայի երկրամասում: Հայրը, լինելով Երկրորդ աշխարհամարտի մասնակից, 1949-ին ստալինյան վարչակարգի կողմից աքսորվել էր Սիբիր: Տարիներ անց տարագրված ընտանիքը վերադառնում է Կիրովական (այժմյան՝ Վանաձոր): Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանն ավարտելուց հետո Գրիգորը 1976-1982 թթ. ուսումը շարունակում է Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի գեղանկարչության ֆակուլտետի թատերական ձևավորման բաժնում: Ուսմանը զուգահեռ, ինչպես նաև ինստիտուտից հետո նա աշխատանքի է անցնում հեռուստատեսությունում՝ որպես բեմադրող նկարիչ: Շուրջ երկու տասնամյակ տևած այդ տարիները նա համարում է ստեղծագործական բուռն շրջան իր կյանքում:

«Շատ էի սիրում գիտահանրամատչելի և ուսումնական հաղորդումները»,- պատմում է Գրիգոր Մարիկյանը՝ տալով հեռուստատեսության գլխավոր նկարիչ Շահեն Հակոբյանի անունը, ումից շատ գիտելիքներ է ձեռք բերել: Դրանք նա օգտագործեց «Մեր լեզուն, մեր խոսքը», «Հայ գրականության դասականներ», «Համաստեղություն» և նմանօրինակ այլ հաղորդաշարեր ձևավորելիս: Որպես դիպլոմային աշխատանք նրա ներկայացրած Վ. Սարոյանի «Քարանձավի բնակիչները» պիեսի հիման վրա արված հեռուստաբեմադրության նկարչական ձևավորումը 1982-ին արժանանում է համընդհանուր դրվատանքի: Դրան հաջորդում են տասնյակ այլ թատերական ներկայացումներ մեր

հեռուստաթատրոնում. Վիկտոր Բալայանի «Դեպք առողջարանում» (1983), Վահագն Գրիգորյանի «Սպիտակ ագռավ» (1986), Գուբարևի «Սարկոֆագ» (1988), Ալյոշինի «Մեֆիստոֆել» (1988) և այլն:

Գաղտնիք չէ, որ թատերական ներկայացումն առանց նկարչական ձևավորման չի կարող գեղագիտորեն ամբողջական լինել: Ավելին՝ գեղանկարչության, ինչպես նաև քանդակագործության ու դեկորատիվ-կիրառական արվեստի գունային և պլաստիկ արտահայտչամիջոցները կոչված են մեծապես ընդլայնելու թատրոնի գեղարվեստական հնարավորությունները, ի մասնավորի՝ դրամատիկական կոնֆլիկտի առավել խորը բացահայտման և բեմական պատշաճ միջավայրի ստեղծման առումներով: Ձևավորող նկարիչը խորամուխ լինելով կատարվող գործողության հյուսվածքի մեջ՝ համամասնակից է դառնում բեմադրող ռեժիսորի մտահղացման իրականացմանը:

90-ականների անլույս օրերը, պատճառ դառնալով հեռուստատեսության տեղատվության, նաև Գրիգոր Մարիկյանին ստիպեցին տեղափոխվել գործունեության այլ ասպարեզ: «Սասուն» հայրենակցական միությունը հենց 1990թ. սկսեց հրատարակել «Երկիր ավետյաց» տասնօրյան: Այդտեղից էլ սկիզբ առավ արվեստագետի ստեղծագործական գործունեության երկրորդ, ոչ պակաս կարևոր շրջանը՝ գրքանկարչությունը:

Ինքը վաղուց արդեն գրքի մարդ էր, մոլի ընթերցասեր: Ուղղակի այժմ պիտի կարդալուց զատ նաև իր երևակայական պատկերները հանձներ թղթին ու իր նկարազարդումներով օգներ ընթերցողին գրական տեքստն ավելի պարզորոշ ըմբռնելու հարցում: Չուշացավ նաև «Նաիրի» հրատարակչության հրավերը, որտեղ երկար ժամանակ աշխատեց որպես գլխավոր նկարիչ:

Գրիգորը ինքն էլ չի հիշում, թե անցած տարիներին քանի՞ գիրք է նկարազարդել: «Վաղուց եմ հազարի սահմանն անցել»,- մի օր ասաց նա: Իրոք, անհաշվելի են մարիկյանական ձևավորումները. իրար նման ու միաժամանակ տարբեր՝ կախված գրքի բովանդակությունից ու դրա հուշած ոճից: Ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներին տիրապետելով հանդերձ՝ Գրիգոր Մարիկյանը խստորեն սահմանափակեց դրանց օգտագործման տիրույթը գրքի ձևավորման ոլորտում: «Նկարին պիտի վրձին դիպչի»,- իր սիրած միտքն էր: Միաժամանակ չէր սիրում համացանցից տարբեր դրվագներ վերցնելն ու տարատեսակ կոլաժներ սարքելը: Նա ամեն ինչ ձեռքով էր անում: Ըստ նրա, համակարգիչը շաբլոնացնում ու չորացնում է ամեն ինչ: Մինչդեռ հարկ է գրքի ոգին ու էությունը պատկերել: Նկարչի ոճն իրենից ներկայացնում է դասականի ու ժամանակակից ձևերի համադրություն՝ հիմքում ունենալով մաքուր նկարչությունը: Ընդ որում, գրքի ձևավորման համար արված նրա շատ գրաֆիկական թերթեր՝ շնորհիվ կոմպոզիցիոն գրագետ լուծումների և կատարման վարպետության, հավակնում են ինքնակա գոյության և շարունակում ապրել գրական տեքստից անկախ կյանքով:



Նա ստեղծագործել է տարբեր տարիքի ու նախասիրությունների տեր ընթերցողների համար, համագործակցել «Զանգակ», «էդիթ փրինթ», ԵՊՀ և այլ հրատարակչությունների հետ: Դժվար է, իհարկե, բոլորի միջից զատել առանձին նկարազարդումներ, բայց և չի կարելի չհիշատակել Նարեկացու, Չարենցի, Բակունցի, Տերյանի ու Շիրազի հոբելյանական գրքերը, Հովի. Թումանյանի հեքիաթները, մի քանի անգամ վերահրատարակված Քուչակի «Հարյուր ու մեկ հայրենը»՝ լույս տեսած չորս լեզուներով: Ընդհանուր թեմատիկայից, իհարկե, առանձնացնելի են պատմական թեմայով երկերը՝ սկսած Խորենացու «Հայոց պատմությունից» ու Կորյունի «Վարք Մաշտոցից» մինչև Նիկողայոս Ադոնցի ու Հակոբ Մանանդյանի երկասիրությունները, Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչ» վիպասքն ու Հովի. Շիրազի «Անի» պոեմը: Վերջին տարիներին հենց Գրիգորին էր հանձնվում հայոց ցեղասպանության թեմաներով հայ և օտար հեղինակների ստեղծագործությունների ձևավորումը (Կուրթ Վոնեգութի «Կապտամորուսը» վեպը, էդգար Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» և այլ ստեղծագործություններ):

Այդուհանդերձ ամեն ինչ չէ, որ Գրիգոր Մարիկյանը հասցրեց անել: Դեռ ասելիք ու անելիք ուներ այդ ասպարեզում. ուզում էր տալ «Սասնա ծռեր» էպոսի նկարչական ընթերցման իր տարբերակը: Ճիշտ է, շատ էր հավանում Հակոբ Կոջոյանի դասական ձևավորումը, բայց և գտնում էր, որ ժամանակները փոխվել են՝ պահանջելով նոր մոտեցումներ: Միտքը զբաղված էր նաև ֆիդայական շարժման առանձին դրվագների ու հայ դյուցազունների պատկերման գաղափարով:

Ուշագրավ են նաև մերօրյա բանաստեղծների՝ Գրիգոր Մարիկյանի նկարչական «թարգմանությունները»: Դյուրին չէ, անշուշտ, պոեզիա ձևավորելը. ինքդ էլ պիտի պոետական հոգի ունենաս: Պարզվում է՝ Գրիգորը ժամանակին նաև գրական երկչոտ փորձեր է արել, որոնք մեծապես օգնեցին իրեն ազատ սավառնելու պոետական ոլորտներում…

Այդ բանաստեղծականությունն առկա է նաև նկարչի տասնյակ բնանկարներում, որոնք նա արել է Հայաստան աշխարհի տարբեր անկյուններ այցելելուց հետո: «Շատ եմ սիրում ճամփորդել,- խոստովանում է նկարիչը,- Հիմա, երբ դժվարացել է քաղաքից դուրս գալը, ավելի շատ եմ կարոտում բնությունը»: Ժամանակին նա նաև շատ դիմանկարներ, ներառյալ՝ ինքնադիմանկարներ է արել: Պարզապես գիրքը նրանից շատ ժամանակ խլեց՝ թույլ չտալով ինքնասևեռումի և անմնացորդ ինքնադրսևորման:

Ափսոս որ անկատար մնաց նաև Գրիգոր Մարիկյանի կամ, ինչպես իր ընկերներն էին նրան ասում՝ Գրիգի մեկ այլ երազանքը՝ կապված անհատական ցուցահանդես կազմակերպելու հետ: Մի քանի տարի առաջ ավարտվեց նրա երկրային կյանքի ժամանակը՝ իր ետևից թողնելով բարի հուշ ու լուսավոր թախիծ:

Լևոն Լաճիկյան